ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 30 » սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-99/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 14.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 14.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի

տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար սահմանվել են ազդող նյութերի կոնկրետ այնպիսի անվանումներ, որոնք չեն հանդիպում նմանատիպ և համարժեք, սակայն այլ անվանում ունեցող միջոցների մոտ, ինչպես նաև ազդող նյութերի առումով առկա են նաև իրարամերժ պահանջներ:

Բացի այդ, առկա են այնպիսի փաստաթղթեր ունենալու պահանջներ, որոնք ընդհանրապես գոյություն չունեն:

Այդ բոլորը հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունքվետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը հանգեցրել է ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

Ընկերությունը նշել է, որ 26.08.2016թ. դիմել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ խնդրելով դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի որոշումը՝ Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով, միևնույն ժամանակ խնդրելով նաև կիրառել ժամանակավոր միջոց, կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետով կայացված որոշումն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու մասին:

Ընկերությունը հայտնել է, որ ԳԲԽ-93/16 բողոքը քննող հանձնաժողովը 01.09.2016թ. որոշմամբ մասնակի բավարարել է «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը և կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 11 արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետի որոշումը՝ Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու մասին:

06.09.2016թ. Կենտրոնի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ին տրամադրվել է «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 31.08.2016թ. թիվ 08-267 գրությունը, որից պարզ է դառնում, որ Պատվիրատուն 22.08.2016թ. կնքել է պայմանագիր Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով դեռևս 10.06.2016թ. և 27.07.2016թ. հաղթող ճանաչված «Մագտոնի» ՍՊԸ-ի հետ:

Ընկերությունը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի ԳԲԽ-93/16 բողոքով ներկայացրած պահանջները դառնում են ժամանակավրեպ, ուստի 2016թ. սեպտեմբերի 7-ին «Խաչպար» ՍՊԸ-ն դիմել էր ԳԲԽ-93/16 բողոքը քննող հանձնաժողովին՝ խնդրելով դադարեցնել նշված բողոքի քննարկումներն ու հետագա գործընթացները, որի մասին որոշումն ընդունվել է սեպտեմբերի 9-ին, որպեսզի նոր պահանջներով նոր բողոք ներկայացնի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

Դա կատարվել է 07.09.2016թ. ներկայացված բողոքով, որի իրավական հիմքերը հետևյալներն են՝

ա) Ընթացակարգի հավելված թիվ 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 52-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի համար տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում Պատվիրատուի կողմից նշված պահանջները չհիմնավորված խոչընդոտներ են առաջացրել «Խաչպար» ՍՊԸ-ի համար,

բ) գնման գործընթացը կազմակերպվել է խտրական հիմունքներով,

գ) գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականացվել,

դ) Պատվիրատուի կարիքին համապատասխան ապրանքի ձեռքբերումը կատարվել է ոչ համարժեք հատուցմամբ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 52-րդ չափաբաժնի համար սահմանված «Գնման առարկայի անվանումը» և «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում նշված և հաղթող ճանաչվածը նույնն են՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանմամբ միջոցը:

Ընկերությունը խնդրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ապօրինի հայտարարել Պատվիրատուի և «Մագտոնի» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով:

2. Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

ա) Պատվիրատուի կողմից հրավերի տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ փոփոխությունները կատարելու և այդ մասին սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու համար «Խաչպար» ՍՊԸ-ն 2016թ. մայիսի 27-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին, իսկ հաջորդ աշխատանքային օրը՝ մայիսի 30-ին ժամը 11:30-ին գրավոր դիմել է Պատվիրատուին, որը նույն օրը՝ ժամը 12:00-ին արտահերթ նիստ է արել և մերժել Ընկերության դիմումը:

Ընկերությունը հայտնել է, որ ***այդ ամենը բազմիցս քննարկվել է ԳԲԽ-72/16, ԳԲԽ-80/16 և ԳԲԽ-93/16 բողոքները քննող հանձնաժողովների կողմից:***

բ) «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված վերը նշված որոշումների և կնքած պայմանագրի շնորհիվ, ՀՀ պետական բյուջեն միայն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով ունենալու է 1650000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի գերածախս:

Ընկերությունը ***20.09.2016թ. ներկայացրել է բողոքի լրացում***, որով հստակեցրել է պահանջը՝ *խնդրելով համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ապօրինի հայտարարել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը՝ 52-րդ չափաբաժնի մասով:*

«Խաչպար» ՍՊԸ-ն ***ի լրումն ԳԲԽ-99/16 բողոքի 24.09.2016թ. ներկայացրած գրությամբ*** հայտնել է, որ բացարձակապես համաձայն չէ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության թիվ 1 կետում Պատվիրատուի ներկայացրած անհամապատասխանությունների թվարկումների, կատարված հաշվարկների և եզրակացությունների հետ, դրանք համարում է անհիմն, ոչ լիարժեք, ինչպես նաև առկա փաստերի և տվյալների խեղաթյուրմամբ ներկայացված:

2016թ. հունիսի 24-ից առ այսօր «Խաչպար» ՍՊԸ-ն բազմիցս դիմել է թե ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 72/16 և 80/16 հանձնաժողովներին, թե «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ միևնույն խնդրանքով, որպեսզի «Խաչպար» ՍՊԸ-ին տրամադրվի

հրավերի 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով «...հրավերով պահանջված ...» և հաղթող ճանաչված մասնակիցների կողմից «...սահմանված կարգով և ժամկետներում ...» ներկայացված՝ «**ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր**»-ի պատճենները, ինչպես նաև Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով հաղթող ճանաչված մասնակցի կողմից «...սահմանված կարգով և ժամկետներում...» ներկայացված՝ «**մեթոդական հրահանգ**»-ի պատճենը, որոնք սակայն մինչև օրս չեն տրամադրվել «Խաչպար» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով Պատվիրատուի կողմից նշված «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով օճառի՝ ՀՀ ԱՆ հաստատված կիրառման մեթոդական հրահանգի բացակայության պատճառով (հնարավոր է նաև՝ որպես այդպիսին, գոյություն չունենալու՝ ենթադրելի հիմնավորումով), պարտադրված ենք համեմատություններ կատարել և եզրահանգումների գալ ինտերնետից ստացված ինֆորմացիայի հիման վրա:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով «Խաչպար» ՍՊԸ-ին մերժելու որոշումը հիմնավորում է, իբրև «Մասնակցի առաջարկած նյութն ունի այլ ազդող նյութեր, ֆունգոստատիկ հատկություն ըստ բնութագրերի չունի, տարան դոզավորված չէ, ինչը կարող է բերել չհիմնավորված գերածախսի և աշխատանքային անհարմարավետության»:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հաստատված «Դիասոֆտ բիո» հականեխիչ լվացող միջոցի կիրառման մեթոդական հրահանգի՝ այդ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ, արտահայտված լվացող հատկություններով, չի չորացնում ձեռքերի և մարմնի մաշկը, հիպոալերգիկ է, pH-ը չեզոք է:

Միջոցը նախատեսված է հականեխիչ մշակումից, ինչպես նաև բժշկական միջամտություններից առաջ և հետո բժշկական անձնակազմի, այդ թվում նաև՝ վիրաբույժների, ձեռքերի հիգիենիկ մշակման համար, բժշկական օգնության դիմած անձանց ձեռքերի հիգիենիկ և մաշկային ծածկույթների սանիտարական մշակման, ինչպես նաև ազգաբնակչության կողմից կենցաղում կիրառելու համար:

Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումն այդ մերժման հիմնավորումը գրելուց առաջ պարտավոր էր պարզել ազդող նյութի՝ տրիկլոզանի հատկությունները, որն ունի հակաբակտերիալ և հակասնկային ազդեցության լայն

սպեկտր, ազդում է գրամ–դրական և գրամ-բացասական բազմաթիվ մանրէների վրա, ինչպես նաև սնկային միկրոօրգանիզմների վրա:

Այն, որ Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման մասնագետը, կամ մասնագետները թերանում և թերացել են իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս, փաստվում է թեկուզ հենց այն իրարամերժ սահմանումների և պահանջների գոյությամբ, ինչն առկա է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնում:

Ընկերությունը նշել է, որ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով օճառի տեխնիկական բնութագրում գրված է՝ «....Չի պարունակում ՄԱՆ-եր,...» պահանջը:

ՄԱՆ հապավումը նշանակում է՝ Մակերեսային Ակտիվ Նյութեր (ռուսերեն հապավումը՝ ПАВ):

Պատվիրատուի հրավերի 52-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է՝ «...Ազդող նյութեր են հանդիսանում՝ իմիդազոլինն ամֆոտեր հատկություններով,...»:

Իմիդազոլինները հենց իրենք են հանդիսանում Մակերեսային Ակտիվ Նյութեր՝ ՄԱՆ-եր (ռուսերեն հապավումը՝ ПАВ) և մեծ կիրառում ունեն քիմիական արդյունաբերությունում:

Համաձայն ինտերնետից ստացված ինֆորմացիայի, «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»-ն ձեռքերի և մարմնի լվացման համար նախատեսված հեղուկ օճառ է:

Հերթական պարզագույն թվաբանական հաշվարկը ցույց է տալիս (2100000-1170000 =730000), որ Պատվիրատուն պատրաստ է իր իրարամերժ պահանջներն ու ցանկությունները բավարարելու համար կատարել ևս 730000 ՀՀ դրամի գերածախսով ոչ համարժեք հատուցմամբ ձեռքբերում, դրանով հերթական անգամ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

<u>«Խաչպար» ՍՊԸ-ն 30.09.2016թ. ներկայացրել է ի լրումն ԳԲԽ-99/16 բողոքի</u> և հայտնել, որ համաձայն «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի» ախտահանող միջոցները դասակարգված են «Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք» 6-րդ բաժնի «Այլ քիմիական ապրանքներ» 38-րդ խմբի «Ախտահանող միջոցներ» 380894 դիրքում՝ ըստ ենթադիրքերի:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. ապրիլի 13-ի «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը հաստատելու մասին» թիվ 220-Ն հրամանի՝ «Այլ քիմիական նյութերը» ընդգրկված են «Քիմիական նյութեր» գնման առարկայի անվանումով 1.15 համարը կրող խմբի 15.4 համարի ենթախմբում:

Ուստի ախտահանող միջոցները պետք է ընդգրկված լինեն «Քիմիական նյութեր» անվանումով 15/15 ընթացակարգի հրավերներում:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքների վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ***19.09.2016թ. թիվ 08-296 գրությամբ*** «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.09.2016թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով 25.05.2016թ. կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: 27.05.2016թ. Ընկերությունն ահազանգ է ներկայացրել Գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին՝ բողոքարկելով Ընթացակարգի հրավերի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ և 54-րդ չափաբաժիններով ներառված ապրանքների տեխնիկական բնութագրերի կազմման համապատասխանությունը գործող իրավական ակտերին, այնուհետև 30.05.2016թ. դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու խնդրանքով:

«Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի՝ 2-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 31-րդ, 41-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 61-րդ, 63-րդ և 71-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

Պատվիրատուն նշել է, որ Ընկերությունն արդեն չորրորդ բողոքն է ներկայացնում Կենտրոնին (ԳԲԽ-72/16, ԳԲԽ-80/16, ԳԲԽ-93/16, ԳԲԽ-99/16), ինչպես նաև երեք անգամ ահազանգել է Կենտրոնի թեժ գծին: Հետևաբար, այս՝ ԳԲԽ-99/16 բողոքով Ընկերության կողմից ներկայացված «բոլոր խախտումները» բազմիցս քննարկվել են նախկին ահազանգերի արդյունքում կազմակերպված քննարկումների և բողոքների

ընթացքում, որտեղ Ընկերությունը տեխնիկական բնութագրերի խտրական և օրենքի խախտումներով լինելու մասին հիմնավոր փաստարկներ չի ներկայացրել, հետևաբար ի օգուտ Ընկերության որևէ որոշում չի ընդունվել:

Սույն բողոքի փաստարկը և պահանջն այն է, որ Պատվիրատուն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով պայմանագիրը կնքել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների խախտմամբ, ուստի Ընկերությունը խնդրել է պայմանագիրը հայտարարել ապօրինի:

Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կնքված պայմանագիրն ապօրինի չի հայտարարվում, այլ կարող է հայտարարվել չեղյալ, եթե այն կնքվել է նշված հոդվածի 3-րդ կետով ներկայացված խախտումների առկայությամբ: Նշված խախտումներ պատվիրատուի կողմից թույլ չեն տրվել, նշված պայմանագրի կնքելու մասին որոշումը հրապարակված է եղել գնումների տեղեկագրում և Ընկերությունը հնարավորություն է ունեցել բողոքարկել պայմանագիրը կնքելու մասին որոշումը հայտարարված անգործության ժամանակահատվածում, ինչը չի արել, ուստի Պատվիրատուն և ընտրված մասնակիցն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով պայմանագիրը կնքել են ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Պատվիրատուն գտել է, որ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

«Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն Ընկերության կողմից ներկայացրած <u>ի լրումն բողոքի կապակցությամբ ***22.09.2016թ. թիվ 08/300*** </u>գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգը կարելի է հայտարարել ապօրինի, եթե գնման ընթացակարգի հրավերն այս կամ այն կերպ հակասում է ՀՀ գնումների մասին օրենսդրությանը: Ընկերության այն պահանջին, որ Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը պարունակում են իրարամերժ պահանջներ, առկա են այնպիսի փաստաթղթեր ունենալու պահանջներ, որոնք ընդհանրապես գոյություն չունեն, ինչպես նաև նշված է գնման առարկայի բաղադրիչի՝ ազդող նյութի անվանումը և այս բոլոր պահանջները հանդիսանում են խտրական: Պատվիրատուն նշել է՝

1. Իրարամերժ պահանջի մասին – Հրավերի տեխնիկական բնութագրում նշված է եղել հետևյալ արտահայտությունը. «Չի պարունակում ՄԱՆ-եր», սակայն նշված

բաղադրիչներից մեկը հանդիսանում է ՄԱՆ: Նշված վրիպակի մասին բազմիցս նշվել է նաև նախորդ բողոքների ժամանակ: Դա ոչ թե հանդիսանում է խտրական պահանջ, այլ ընդամենը տեխնիկական վրիպակի հետևանք է: Ընթացակարգին մասնակցած որևիցե մասնակցի, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկը նշված վրիպակի պատրվագով չի մերժվել, մասնակիցների առաջարկած ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատելիս նշված տարբերությունը որևիցե կերպ չի դիտարկվել: Ուստի ինչպես կարելի դիտարկել խտրական մի պայման, եթե այն չի գնահատվել և չի հանդիսացել արգելք, որևիցե մասնակցի համար:

2. Գոյություն չունեցող փաստաթղթերի պահանջ – Հրավերի տեխնիկական բնութագրում նշված է եղել հետևյալ արտահայտությունը. «Ունի ISO, ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր և մեթոդական հրահանգ»: Այս հարցը բազմիցս քննարկվել է նախորդ բողոքներում և լիովին նույն իրավիճակն է, ինչ որ «իրարամերժ պահանջներ»-ի մասով: Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը դեղամիջոց չէ և պարզապես չի կարող ունենալ ՀՀ ԱՆ գրանցման հավաստագիր, իսկ մեթոդական հրահանգ կարող է չունենալ, քանի որ ախտահանիչ միջոց էլ չի հանդիսանում (ի դեպ բողոքաբեր կողմը ներկայացրել է մեթոդական հրահանգ տվյալ ապրանքի մասով): Որևիցե մի մասնակից մասնակցելով Ընթացակարգի 52-րդ չափաբաժնին չի հանդիպել արգելքի նշված պահանջների մասով, գնահատող հանձնաժողովը դրանք նույնպես դիտել է որպես տեխնիկական վրիպակներ և մասնակիցների առաջարկած ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատելիս այդ պարամետրերով մասնակիցների առաջարկները չի գնահատել և չի մերժել: Ակնհայտորեն սա նույնպես չի կարելի դիտարկել որպես խտրական պահանջ:

3. Ազդող նյութի անվանումը- Հրավերի տեխնիկական բնութագրերում նշված են ապրանքի ազդող նյութերի անվանումները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

• 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

• 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Պատվիրատուն հայտնել է, որ, տվյալ դեպքում, եթե ազդող նյութը չնշվի տեխնիկական բնութագրում, կստացվի, որ Պատվիրատուին անհրաժեշտ է որոշակի քանակով օճառ, այսինքն Պատվիրատուն ստիպված կլինի ընդունել առաջարկված ցանկացած օճառ: Կստացվի առնվազն ծիծաղելի ու կարիքին չհամապատասխանող ձեռքբերում: Առողջապահական ոլորտում ցանկացած *քիմիական նյութի նկարագրությունը, իսկ բժշկական նշանակության օճառը դա որոշակի քիմիական և այլ նյութերի միացություն է,* առանց դրա բաղադրությունում ներառված ազդող նյութերի ներկայացման անհնարին է: Այսինքն, ապրանքի բաղադրության մեջ կա մի նյութ, որի առկայությամբ և չափաքանակով է պայմանավորված տվյալ նյութի ազդեցությունը և իր նպատակին ծառայելը: «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշման դրույթները հաստատում են հենց դա:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն նշել է, որ ինչ վերաբերում է տվյալ ազդող նյութով միայն մեկ ապրանք լինելու փաստով պայմանավորված խտրական պահանջ լինելուն, ապա դա ևս հիմնավոր տեղեկություն չէ, քանի որ բժշկական նշանակության օճառը Հայաստանի Հանրապետությունում գրանցման ենթակա ապրանք չէ, և Պատվիրատուն չի կարող ամբողջ աշխարհում գոյություն ունեցող նմանատիպ

ապրանքների մասին տեղեկություններ ունենալ: Կարող են գոյություն ունենալ նույն ազդող նյութով տարբեր օժանդակ նյութերով, կամ նույն ազդող նյութի ավելի մեծ չափաբաժնով տարբերակներ: Բացի այդ, չկա որևիցե մի իրավական ակտ, որով կարգավորվի որևէ մասնակցի կողմից հենց հրավերով նկարագրված ապրանքանիշի ներկայացնելը: Այնուհետև, Ընկերությունը մասնակցելով Ընթացակարգին ներկայացրել է գնային առաջարկ, որով հայտնել է, որ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով: Սա նույնպես փաստում է այն մասին, որ մասնակիցը սահմանափակող հանգամանքներ չի տեսել տեխնիկական բնութագրում և անհամապատասխանությունները դիտել է որպես տեխնիկական վրիպակներ, ինչպես և գնահատող հանձնաժողովը:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն ***ի լրումն ներկայացված դիրքորոշման՝ 27.09.2016թ. թիվ 08-315 գրությամբ*** հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված բոլոր նյութերն ու փաստարկները բացարձակապես կապ չունեն բողոքի պահանջի հետ:

Բողոքի պահանջը հրավերն ապօրինի հայտարարելն է, ոչ թե ապրանքների համարժեքությունը գնահատելը: Համարժեքության հարցն արդեն քննարկվել է 80/16 բողոքով և Ընկերությունն իրավունք չունի նույն հարցով երկրորդ անգամ բողոքարկել:

Ինչ վերաբերում է բուն բողոքին, ապա մասնակիցն իրավունք չունի նույն հարցով երկրորդ անգամ բողոքարկել: Ինչ վերաբերում է բողոքին, ապա Ընկերությունը պետք է ոչ թե ամբողջ Ընթացակարգի պատմությունը ներկայացնի տարբեր-տարբեր դրսևորումներով և խճճումներով, այլ ընդամենը պետք է ներկայացնի փաստեր, որով սահմանափակվել է իր մասնակցությունն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնին կամ պետք է ապացուցի ՀՀ գնումների մասին օրենսդրությանը հակասող խտրական պահանջի առկայությունը տեխնիկական բնութագրում: Այդպիսի նյութեր և տեղեկություններ առայժմ «Խաչպար» ՍՊԸ-ն չի ներկայացրել և չի էլ կարող, քանի որ դրանք գոյություն չունեն:

Պատվիրատուն նշել է, որ «կամ համարժեք» բառակապակցությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ուղիղ իմաստով չի վերաբերում ապրանքի որակական և քանակական հատկանիշներին, բաղադրությանը, փաթեթավորմանը և այլ պայմաններին, այլ վերաբերում է կոնկրետ «առևտրային նշանին, ֆիրմային

անվանմանը, արտոնագրին, Էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին» կատարած հղումներին: Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրերում ներառվող բաղադրիչները, դրանց քիմիական անվանումները, դրանց չափաբաժինները չեն կարող հանդիսանալ «կամ համարժեք» իմաստով ցանկացած մեկով փոխարինելը, ուստի դրանց ներառելը հարկավոր է ապրանքի որակի գնահատման համար: Հակառակ դեպքում դա նման կլինի այն բանի, որ դեղը կամ ախտահանիչ նյութերը նկարագրվեն առանց ազդող նյութի, կամ համակարգիչը՝ առանց արագագործության կամ հիշողության ցուցանիշի, ավտոմեքենան՝ առանց շարժիչի աշխատանքային ծավալի, թթվասերն առանց յուղայնության տոկոսի և այլն: Կարելի է բերել անթիվ նման օրինակներ բոլոր ոլորտներից առանց չափազանցման:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն հայտնել է, որ նախորդ բողոքների ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է ախտահանիչ նյութերի գնահատման չափանիշները, որտեղ նշված են հինգ ցուցանիշ՝ նյութի բաղադրակազմը, պիտանելիության ժամկետը, հակամիկրոբային ակտիվության սպեկտորը, թունավորության և անվտանգության ցուցանիշը, կիրառման նպատակը:

Պատվիրատուն նշել է նաև, որ չնայած Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան չի հանդիսանում ախտահանիչ նյութ և պետք չէ դրան ուղղակիորեն վերագրել այդ ուղեցույցը, սակայն քննարկվող ապրանքը բժշկական նշանակության օճառ է, իր կիրառման բնույթով նույնպես ունի բոլոր հինգ ցուցանիշները և դրանք բոլորը ներգրավված են հենց Ընկերության կողմից ներկայացված մեթոդական հրահանգում: Դրանցից ցանկացածը տեխնիկական բնութագրում ներառելը չի կարելի դիտել որպես խտրական պահանջ: Դրանք պարզապես ապրանքի բնութագրիչ տվյալներ են, որոնց ներառելը տեխնիկական բնութագրում չի հակասում ՀՀ գնումների մասին օրենսդրության որևիցե մի կետին:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն Ընկերության ***30.09.2016թ. ներկայացրած ի լրումն բողոքի վերաբերյալ 03.10.2016թ. թիվ 08/322 գրությամբ*** Կենտրոնին հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի կոդերը որևէ կերպ չեն կարող հիմք

հանդիսանալ ապրանքախմբերի դասակարգման համար՝ ըստ գնումների ընթացակարգերի: Դրա համար գոյություն ունի ՀՀ գնումների մասին օրենսդրություն, որի մասն է կազմում ՀՀ ֆինանսների նախարարի 10.10.2013թ. թիվ 896-Ն հրամանը:

Հրամանի N 2 հավելվածով սահմանված գնումների պլանի լրացման կարգի համաձայն՝ գնումների պլանում գնման առարկային վերագրվում է անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան միջանցիկ կոդը: Գնումների պլանում գնման ձևը լրացնելիս, որպես ապրանքների նախահաշվային գին, ընդունվում է անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների խմբերի գումարը: Հրամանի հավելված 5-ով սահմանված են ապրանքներին վերագրվող կոդերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առանձին ընթացակարգ անցկացնելուց խուսափելու նպատակով արգելվում է՝

1) գնումը բաժանել առանձին չափաբաժինների՝ բաց կամ սահմանափակ ընթացակարգի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել գնման պայմանագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Վերոհիշյալ իրավական ակտերի դրույթներից որևէ մեկը Պատվիրատուն չի խախտել, Ընթացակարգի 52-րդ չափաբաժինը ներառել է Ընթացակարգում համաձայն վերոհիշյալ դրույթների:

Գնումների միասնական անվանացանկում բողոքի առարկա հանդիսացող ապրանքը՝ բժշկական նշանակության օճառը, առանձին կոդով ներառված չէ, սակայն այն ներառված է ընդհանրացված անվանումով «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ», այն ունի հակամանրեային ազդեցությամբ և անտիսեպտիկ հատկություններով օժտված միջոց, հանդիսանում է նաև անձնական հիգիենայի պարագա, ուստի և ներառվել է համապատասխան ապրանքախմբում և գնումների միասնական անվանացանկի համաձայն նրան վերագրվել է 33621641 միջանցիկ կոդը: Անվանացանկի ընդհանրացված 33000000 կոդի տակ ներառված են «Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ» ապրանքախմբերը և այնտեղ

են ներառված համապատասխան կոդերով բժշկական նշանակության բոլոր ապրանքները, անկախ բնույթից: Ինչպես բողոքի առարկա հանդիսացող ապրանքը, այնպես էլ ախտահանիչ միջոցները, նաև բոլոր դեղերն իրենց բաղադրություններով քիմիական նյութեր են, ապա ինչու գնումների միասնական անվանացանկում դրանք չեն ներառվել 24000000 ընդհանրացված կոդի ներքո, այլ ներառվել են բժշկական նշանակության ապրանքներին վերագրված 33000000 կոդի ներքո: Դա նշանակում է, որ Ընկերության մեկնաբանությունները գնման ապրանքախմբերի վերաբերյալ խեղաթյուրված են:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ինչ վերաբերում է Ընկերության նշված «այլ քիմիական ապրանքներ» ապրանքային խմբին, ապա անվանացանկում դրանք ներառված են 24000000 ընդհանուր կոդի «Քիմիական արտադրանք» ընդհանրացված անվանումով իրենց համապատասխան բացվածքներով: Միաժամանակ, Ընկերության նշած՝ 380894 կառուցվածքով կոդեր անվանացանկում գոյություն չունեն, իսկ 38000000 ընդհանրացված կոդի տակ ներառված են «լաբորատորիայի, օպտիկական և ճշգրիտ սարքեր ապրանքային խմբերը, որոնք ընդհանրապես կապ չունեն բողոքարկվող ընթացակարգի հետ:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության կողմից բողոքին ի լրումն ներկայացված փաստարկներն անհիմն են և բողոքը ենթակա է մերժման:

3. <u>ԳԲԽ-99/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-99/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 52-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 52-րդ չափաբաժնով պահանջվել է՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» կամ համարժեք ապրանքատեսակը:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 52-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»-ին համարժեք՝ «Դիասոֆտ բիո» ապրանքատեսակը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը **52-րդ** չափաբաժնի մասով՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ, միաժամանակ նշելով՝ **Ընթացակարգի 52-րդ չափաբաժով** նախատեսված նյութն օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ, ունի համապատասխան ազդող նյութեր ըստ տեխնիկական բնութագրի, տարան դոզավորված է, պոմպի մեկ սեղմումը 2մլ է, որը շատ պրակտիկ է և կիրառման ժամանակ բերում է նորմավորված ծախսի: Մասնակցի առաջարկած նյութն ունի այլ ազդող նյութեր, ֆունգոստատիկ հատկություն ըստ բնութագրերի չունի, տարան դոզավորված չէ, ինչը կարող է բերել չհիմնավորված գերածախսի և աշխատանքային անհարմարավետության:

5. Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»-ին «Դիասոֆտ բիո» ապրանքատեսակի համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. թիվ 01/03.2/2954-16 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

6.Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 15.08.2016թ. թիվ ԱԿ 9003-16 գրությամբ հայտնել է հետևյալը.

- սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի, կից ներկայացնելով համարժեքության վերաբերյալ աղյուսակ, ըստ որի՝ Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

7. Ընկերության կողմից ***20.09.2016թ., 24.09.2016թ. և 30.09.2016թ. ներկայացվել են ի լրումն ԳԲԽ-99/16 բողոքի:***

8. Պատվիրատուի կողմից ***22.09.2016թ. թիվ 08/300, 27.09.2016թ. թիվ 08-315 գրությամբ, 03.10.2016թ. թիվ 08/322 գրություններով*** ի լրումն Ընկերության ներկայացրած բողոքի ներկայացվել է դիրքորոշում:

9. Պատվիրատուն 31.08.2016թ. թիվ 08-267 և 19.09.2016թ. թիվ 08-296 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով, սահմանված անգործության ժամկետի և ԳԲԽ-80/16 բողոքի որոշման կայացնելուց հետո «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի և «Մագտոնի» ՍՊԸ-ի միջև **22.08.2016թ.** կնքվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով պայմանագիր:

10. Ընկերության կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին բողոքը ներկայացվել է **14.09.2016թ:**

4. ԳԲԽ-99/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 14.09.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի 20.09.2016թ., 24.09.2016թ. և 30.09.2016թ. ներկայացված գրությունները, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 19.09.2016թ. թիվ 08-296, 22.09.2016թ. թիվ 08/300, 27.09.2016թ. թիվ 08-315 և 03.10.2016թ. թիվ 08/322 գրությունները, Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը և հիմք ընդունելով՝ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. թիվ ԱԿ 9003-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտով ներկայացված թիվ 52-րդ չափաբաժնի մասով՝ ներկայացված ապրանքների ***տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:***

Ընկերությունը 14.09.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար սահմանվել են ազդող նյութերի կոնկրետ այնպիսի անվանումներ, որոնք չեն հանդիպում նմանատիպ և համարժեք, սակայն այլ անվանում ունեցող միջոցների մոտ, ինչպես նաև ազդող նյութերի առումով առկա են նաև իրարամերժ պահանջներ, ինչը հանգեցրել է գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը:

«Խաչպար» ՍՊԸ-ն 24.09.2016թ., ի լրումն ԳԲԽ-99/16 բողոքի, հայտնել է, որ բացարձակապես համաձայն չէ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրությամբ Պատվիրատուի ներկայացրած անհամապատասխանությունների թվարկումների, կատարված հաշվարկների և եզրակացությունների հետ, դրանք համարում է անհիմն, ոչ լիարժեք, ինչպես նաև առկա փաստերի և տվյալների խեղաթյուրմամբ ներկայացված:

Բողոքում նշված Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»-ի և «Դիասոֆտ բիո» ապրանքատեսակների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. թիվ 01/03.2/2954-16 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն:

Ի պատասխան Կենտրոնի 03.08.2016թ. թիվ 01/03.2/2954-16 գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 15.08.2016թ. թիվ ԱԿ 9003-16 գրությամբ հայտնել է, որ սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի, ինչ վերաբերվում է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցին, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

Ընկերությունն հայտնել է, որ վերջինիս կողմից վերը նշվածի վերաբերյալ Կենտրոնին ներկայացված բողոքները ***քննարկվել են ԳԲԽ-72/16, ԳԲԽ-80/16 և ԳԲԽ-93/16 բողոքները քննող հանձնաժողովների կողմից և մերժվել են:***

Կենտրոնը գտնում է, որ նույն հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա են ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումներ, որոնցով մերժվել են Ընկերության կողմից Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի վերաբերյալ նույնաբովանդակ բողոքները՝ դրանք անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Ուստի «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն այս մասով անհիմն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային***, թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը:

Այսպիսով, Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ***չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.***

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված է «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» հանդիսացող ապրանքների ցանկը:

Այսպիսով, Կենտրոնի կողմից բողոքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 52-րդ չափաբաժնով սահմանվել է «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը, որը

ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով**), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը պետք է ընդգրկված լիներ Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով**) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

Կենտրոնը գտնում է, որ որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն այս հիմքով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետերի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝ հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի և «Մագտոնի» ՍՊԸ-ի միջև **22.08.2016թ.** կնքվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով պայմանագիր Ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով, ուստի առաջարկում ենք «Խաչպար» ՍՊԸ-ի 14.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 52-րդ չափաբաժնի մասով հայտարարել ապօրինի:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-99/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան